

ԻՆՉՈՒ՞ Է ՏԱՔ ԵՐԿՐԻ ԸՆԴԵՐՔԸ

Հայտնի է, որ երկրագնդի ներքին տիրույթները բավականաչափ տաք են: Մակերևութից դեպի կենտրոն խորանալիս երկրակեղևում ջերմաստիճանը յուրաքանչյուր կիլոմետրից հետո աճում է միջին հաշվով 30 Կ-ով: 1000 կմ խորությունում, որոշ գնահատումների համաձայն, այն հասնում է 3000 Կ-ի:

Իսկ ինչու՞ է Երկրի ընդերքը տաք, ի՞նչ էներգիայի հաշվին է այն տաքանում: Երկար ժամանակ գիտությանը հայտնի չէր Երկրի ներքին էներգիայի աղբյուրը: Սակայն ճառագայթաակտիվության երևույթի հայտնագործումից և երկրակեղևում ճառագայթաակտիվ տարրերի պարունակությունները որոշելուց հետո պարզ դարձավ, որ Երկրի ներքին էներգիայի հիմնական աղբյուրներից է ուրանի, թորիումի և այլ ծանր տարրերի ճառագայթաակտիվ տրոհումը:

Մայրցամաքների շարժումը, լեռնակազմավորման պրոցեսները, հրաբուխների ժայթքումները և երկրաշարժները կապված են Երկրի ներքին տաք շերտերի առկայության հետ: Ուրեմն՝ բնության այս հզոր երևույթները վերջին հաշվով պայմանավորված են երկրային ապարների բնական ճառագայթաակտիվությամբ: